

«Ֆինքա» Ունիվերսալ
Վարկային
Կազմակերպություն
փակ բաժնետիրական
ընկերություն

Ֆինանսական Հաշվետվություններ
2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

«ՖԻՆՔԱ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	1
ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	2
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	5
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10-72

«ՖԻՆԲԱ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն

Ղեկավարության հայտարարությունը 2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ

Ղեկավարությունը պատասխանատու է «ՖԻՆԲԱ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական վիճակը, գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝

- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները հասկանան որոշակի գործարքների էությունը, Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումներն ու դրույթները և
- Ընկերության գործունեության անընդհատության սկզբունքն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝


- Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, իրականացման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն արտացոլելու և բացահայտելու Ընկերության գործառնությունները և ցանկացած ժամանակ խելամիտ ճշգրտությամբ բացահայտելու Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև հնարավորություն կընձեռնեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման համար խելամիտ քայլերի իրականացման և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2012 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները հաստատված են հրապարակման համար 2013 թվականի մարտի 15-ին:

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից

Գլխավոր տնօրեն
Ե. Բարսեղյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն



Գլխավոր հաշվապահ
Ա. Խաչատրյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ՖԻՆՔՍ» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին և Խորհրդին

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՖԻՆՔՍ» ՈւՎԿ ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2012թ., հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է մեր կողմից անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մեր կողմից իրականացված աուդիտը համապատասխանում է Աուդիտի Միջազգային Ստանդարտներին: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք բարոյական վարքի կանոններին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի կիրառում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:

Աուդիտը նաև ներառում է ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակն առ 31 դեկտեմբերի 2012թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հանգամանքների լուսարանում


Մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություն 4-ի վրա, որը նկարագրում է 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում ներառված համապատասխան գումարների վերաներկայացումը: Մեր կարծիքը չի ձևափոխվել այդ հանգամանքի առնչությամբ:

Այլ նշումներ

«ՖԻՆՔՍ» ՈւՎԿ ՓԲԸ-ի 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական ընկերության կողմից, որն այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ ներկայացրել է չձևափոխված աուդիտորական եզրակացություն՝ 23 մարտի 2012թ. ամսաթվին:

Որպես 2012 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մի մաս, մենք նաև աուդիտի ենք ենթարկել ծանոթագրություն 4-ում նկարագրված ճշգրտումները, որոնք իրականացվել են 2011 թվականի համապատասխան գումարներն ուղղելու նպատակով: Մեր կարծիքով, այդ ճշգրտումները նպատակահարմար են և տեղին են կիրառվել: Մենք չենք իրականացրել Ընկերության 2011 թվականի ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, աուդիտորական դիտարկում կամ որևէ այլ ընթացակարգ, բացի ճշգրտումների առնչությամբ կատարված ընթացակարգերից, հետևաբար, մենք չենք արտահայտում կարծիք կամ որևէ հավաստիացում 2011 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ	
Սրբուհի Հակոբյան Բաժնետեր, Գործադիր տնօրեն	Արա Կուրազյան Աուդիտի ղեկավար
15 մարտի 2013թ.	




**«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար դրամ)**


	Ծան.	2012թ.	2011թ.
Տոկոսային եկամուտ	5	5,494,132	4,209,291
Տոկոսային ծախս	5, 23	<u>(1,690,613)</u>	<u>(1,146,219)</u>
Զուտ տոկոսային եկամուտ մինչ վարկերի արժեզրկումից կորուստների գծով ծախսը		3,803,519	3,063,072
Վարկերի արժեզրկումից կորուստների գծով ծախս	6	<u>(16,818)</u>	<u>(14,115)</u>
ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ		<u>3,786,701</u>	<u>3,048,957</u>
Զուտ (վնաս)/ օգուտ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից	12	(3,904)	3,769
Զուտ օգուտ արտարժույթային գործառնություններից	7	8,596	3,582
Վարձավճարային և կոմիսիոն ծախսեր		(11,154)	(12,507)
Այլ եկամուտ		<u>7,174</u>	<u>113,906</u>
ԶՈՒՏ ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ		<u>712</u>	<u>108,750</u>
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ		<u>3,787,413</u>	<u>3,157,707</u>
Անձնակազմի գծով ծախսեր	8	(1,952,299)	(1,576,445)
Մաշվածություն և ամորտիզացիա	14,15	(97,345)	(72,883)
Այլ գործառնական ծախսեր	9, 23	<u>(1,058,504)</u>	<u>(724,128)</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ		<u>(3,108,148)</u>	<u>(2,373,456)</u>
ՇԱՀՈՒՅԹ՝ ՄԻՆՉԵՎ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԸ		<u>679,265</u>	<u>784,251</u>
Շահութահարկի գծով ծախս	10	<u>(133,357)</u>	<u>(158,197)</u>
ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐԿԱ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ		<u>545,908</u>	<u>626,054</u>
ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		<u>-</u>	<u>-</u>
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵԿԱՄՈՒՏ		<u>545,908</u>	<u>626,054</u>


Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից՝


Գլխավոր տնօրեն
Ե. Բադալյան

15 մարտի 2013թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն




Գլխավոր հաշվապահ
Ա. Խաչատրյան

15 մարտի 2013թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն




10-72 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
(հազար դրամ)**

	Ծան.	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայաց- ված, ծան. 4)	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերաներկայաց- ված, ծան. 4)
ԱԿՏԻՎՆԵՐ՝				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	2,452,924	1,233,861	559,521
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	12	-	3,904	-
Հաճախորդներին տրված վարկեր	13	17,698,847	13,609,321	9,216,700
Հիմնական միջոցներ	14	417,831	275,381	223,509
Կանխավճարներ շահութահարկի գծով		423	-	-
Հետաձգված հարկային ակտիվներ	10	3,190	8,939	-
Ոչ նյութական ակտիվներ	15	95,598	58,516	59,747
Այլ ակտիվներ	16	203,896	48,288	32,769
Վաճառքի համար պահվող ակտիվներ		5,191	5,191	-
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		20,877,900	15,243,401	10,092,246
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Փոխառու միջոցներ Շահութահարկի գծով ընթացիկ պարտավորություններ	17	14,332,214	11,224,871	6,601,825
Հետաձգված հարկային պարտավորություններ		-	86,887	34,496
Այլ պարտավորություններ	18	297,775	222,959	3,575
Ստորադաս փոխառություն	19	1,022,545	976,714	918,880
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		15,652,534	12,511,431	7,778,810
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ				
Բաժնետիրական կապիտալ	20	4,491,710	1,364,720	1,364,720
Զբաղիված շահույթ	21	733,656	1,367,250	948,716
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		5,225,366	2,731,970	2,313,436
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ		20,877,900	15,243,401	10,092,246

Ստորագրված է Հնչակյանի դեկանության անունից



Գլխավոր տնօրեն
Ե. Բադալյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Խաչատրյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

10-72 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**«ՖԻՆԲԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԿԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**


**ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԿԱ ՀԱՄԱՐ
(հազար դրամ)**

	Ծան.	Բաժնետիրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
2011թ. հունվարի 1-ի դրությամբ		1,364,720	948,716	2,313,436
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	21	-	626,054	626,054
Հայտարարված շահաբաժիններ	20	-	(207,520)	(207,520)
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		1,364,720	1,367,250	2,731,970
Ընդամենը հաշվետու տարվա համապարփակ եկամուտ	21	-	545,908	545,908
Թողարկված հասարակ բաժնետոմսեր	20	2,276,990	-	2,276,990
Չբաշխված շահույթի տեղափոխում	20	850,000	(850,000)	-
Հայտարարված շահաբաժիններ	20	-	(329,502)	(329,502)
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		4,491,710	733,656	5,225,366

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից

Գլխավոր տնօրեն
Ե. Բարսեղյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն



Գլխավոր հաշվապահ
Ա. Խաչատրյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

10-72 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**«ՖԻՆԲԱՆ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար դրամ)**


Ծան.	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարված տարվա համար	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարված տարվա համար (վերաներկա- յացված, Ծան. 4)
ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Տարվա զուտ շահույթ	545,908	626,054
Անկանխիկ դրամական հոսքերի ճշգրտումներ՝		
Վարկերի արժեզրկումից կորուստների գծով ծախս	16,818	14,115
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարումներից վնաս	749	3,464
Իրական արժեքով վերաչափվող ֆինանսական ակտիվներից ու պարտավորություններից զուտ օգուտ/(վնաս)	25,626	(3,376)
Զուտ փոփոխություններ հաշվեզրված տոկոսագումարներում	251,733	172,066
Մաշվածություն և ամորտիզացիա	97,345	72,883
Շահութահարկի գծով ծախս՝ ճանաչված ֆինանսական արդյունքում	133,357	158,197
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր՝ նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները	1,071,536	1,043,403
Գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխություններ		
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում		
Հաճախորդներին տրված վարկեր	(3,941,453)	(4,197,740)
Այլ ակտիվներ	(156,065)	(19,874)
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)		
Այլ պարտավորություններ	62,970	(6,437)
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկի ու տոկոսային պարտավորությունների գծով վճարումները	(2,963,012)	(3,180,648)
Վճարված շահութահարկ	(214,495)	(118,320)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(3,177,507)	(3,298,968)
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Հիմնական միջոցների ձեռքբերման գծով վճարումներ	(237,861)	(121,362)
Հիմնական միջոցների օտարումներից մուտքեր	-	496
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով վճարումներ	(39,765)	(5,989)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(277,626)	(126,855)
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ		
Հասարակ բաժնետոմսերի թողարկումից մուտքեր	2,276,990	-
Հասարակ բաժնետոմսերի դիմաց վճարված շահաբաժիններ	(329,502)	(207,520)
Փոխառու միջոցներից մուտքեր	6,897,687	7,646,891

Փոխառու միջոցների մարումներ		(4,180,087)	(3,392,823)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների գուտ հոսքեր		4,665,088	4,046,548
Արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցությունն արտարժույթով պահվող դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		9,108	53,615
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԻ ՋՈՒՏ ԱՃ		1,219,063	674,340
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	11	1,233,861	559,521
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ Ժամանակաշրջանի վերջի դրությամբ	11	2,452,924	1,233,861

Ընկերության կողմից վճարված ու ստացված տոկոսագումարները 2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում կազմել են համապատասխանաբար՝ 1,379,276 հազ. դրամ և 5,434,743 հազ. դրամ:



Ընկերության կողմից վճարված ու ստացված տոկոսագումարները 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարում կազմել են համապատասխանաբար՝ 1,018,569 հազ. դրամ և 4,253,781 հազ. դրամ:

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից



Գլխավոր տնօրեն
Ե. Բաբսեդյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Գլխավոր հաշվապահ
Ա. Խաչատրյան

15 մարտի 2013թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

10-72 էջերում ներկայացված ծանոթագրությունները ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասն են կազմում:

**«ՖԻՆՔԱ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ
(հազար դրամ)**

1. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

«ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ-ն (այսուհետ՝ Ընկերություն) հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն, որի 100% բաժնետոմսերը պատկանում են FINCA Microfinance Coöperatief U.A-ին: Ընկերությունը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն և գրանցվել է 2006 թվականի մարտի 28-ին 22 Կենտրոնական բանկի կողմից N13 արտոնագրային համարի ներքո:

Ընկերությունը զբաղվում է միկրոֆինանսավորմամբ և տրամադրում է անհատական բիզնես վարկեր, ինչպես նաև խմբային և գյուղատնտեսական համապարտ պատասխանատվությամբ միկրո վարկեր: Վարկերը տրամադրում են և՛ տեղական արժույթով, և՛ արտարժույթով: Ընկերությունը սպասարկում է ավելի քան 54,000 հաճախորդների և հանդիսանում է միկրոֆինանսական խոշորագույն ընկերություններից մեկը երկրում:

Ընկերության հիմնադիրն է FINCA International, Inc. միկրոֆինանսական հաստատությունների ցանցը, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Վաշինգտոնում և որն ունի մասնաճյուղեր/դուստր ընկերություններ 21 երկրներում: 2011 թվականին FINCA International Inc.-ը փոխանցեց FINCA Microfinance Coöperatief U.A-ին (վերջինս հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ կոոպերատիվ, որի պաշտոնական գրասենյակը գտնվում է Նիդերլանդներում՝ Ամստերդամ քաղաքում) «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության (Հայաստան) 100% բաժնետոմսերը (թվով 136,472 բաժնետոմս) որպես կոոպերատիվի անդամակցության փայլավճար:

2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կոոպերատիվի անդամներն են՝

1. FINCA Microfinance Holding Company LLC սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցված է ԱՄՆ-ի Դելավեր նահանգում և գրանցման հասցեն է՝ ԱՄՆ, Դելավեր 19808, Վիլմինգտոն, բն. 400, Սենթրրվիլ խճուղի 2711: FINCA Microfinance Holding Company LLC-ն ունի 99 քվե որպես կոոպերատիվի A դասի անդամ:
2. FINCA International LLC՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը գրանցված է ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգում և գրանցման հասցեն է ԱՄՆ, Մերիլենդ 21202, Բալթիմոր, 11 Իսթ Չեյս փողոց: FINCA International LLC -ն ունի 1 քվե՝ որպես կոոպերատիվի B դասի անդամ:

2011 և 2012թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA Microfinance Holding Company LLC -ի բաժնետերերն են հանդիսացել

	2012թ.	2011թ.
Առաջին մակարդակի բաժնետերեր/թողարկված բաժնային կապիտալին տիրապետողներ		
FINCA International LLC	66.33%	66.33%
International Finance Corporation (Միջազգային Ֆինանսական Կորպորացիա)	14.99%	14.99%
KfW	7.19%	7.19%
Nederlandse Financierings Maatschappij voor Ontwikkelingslanden N.V.	6.71%	6.71%
Credit Suisse Microfinance Fund Management Company	2.39%	2.39%
ASN-NOVIB FONDS	2.39%	2.39%
Ընդամենը	100%	100%

FINCA International Inc.-ը, ԱՄՆ-ում հիմնադրված, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ընկերություն է, որի անդամներն Ընկերությունում չեն տիրապետում որևէ սեփականության և չունեն տնտեսական իրավունքներ: 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ FINCA International Inc.-ի անդամներն են՝ Ռուպերտ Սքոֆիլդը, Ջոն Հեթչը, Ռոբերտ Հեթչը և Ռիչարդ Վիլիամսոնը:

«ՖԻՆՔԱ»-ի նպատակն է՝ «Օգնել անապահովներին օգնելու իրենք իրենց»: «ՖԻՆՔԱ»-ն հավատում է, որ համաշխարհային սովը և աղքատությունը չեն կարող հաղթահարվել պարզապես սնունդ բաժանելով և դրամաշնորհներով, բայց կարող են մեկընդմիջտ կրճատվել անապահով մարդկանց ինքնաաջակցման ու ինքնաապահովման միջոցով:

«ՖԻՆՔԱ»-ն տրամադրում է ինքնաաջակցման հնարավորություն՝ կարիքավոր համայնքներում ստեղծելով համայնքային վերականգնվող/շրջանառվող ֆոնդեր կամ «գյուղական բանկեր» իր դուստր կազմակերպությունների միջոցով:

Դուստր կազմակերպությունները, սովորաբար, առանձին իրավաբանական անձինք են, որոնք «ՖԻՆՔԱ»-ի հետ կնքել են համապատասխան համաձայնագրեր: Փոքր վարկերը հնարավորություն են տալիս ներդրումներ կատարել անհատական կամ համայնքային շահութաբեր միկրո ձեռնարկություններում: Մասնակիցները բարելավում են իրենց վստահությունը սեփական հնարավորությունների նկատմամբ, արժանապատվության զգացումը, և ստեղծում խնայողությունների ֆոնդ, որը պատկանում է համայնքին՝ որպես շարունակական ներդրումների մշտական աղբյուր:

Ներկայումս «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ը որպես միկրոֆինանսավորում նպատակաուղղված բանկ վերակազմակերպվելու գործընթացի մեջ է, որը պլանավորված է ավարտել 2013 թվականին և իրականացվում է ամբողջապես ՀՀ Կենտրոնական բանկի կանոնակարգող նորմատիվների համաձայն:

Աճի, զարգացման ու մրցունակության հեռանկարներից ելնելով «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ում մեկնարկել է գործողությունների շարքը միկրոֆինանսավորում իրականացնող բանկի վերակազմակերպվելու ուղղությամբ՝ որպես ռազմավարական պահանջումը և միևնույն ժամանակ էական քայլ Ընկերության առաքելության տեսանկյունից: Ներկայումս «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲԸ-ը հասել է զարգացման այն փուլին, որ միկրոֆինանսավորող բանկի վերածվելը դարձել է միակ ուղին, որով կարող է ապահովել իր գործունեության հետագա ծավալային և որակական աճը, մատուցել իր հաճախորդներին լիակատար ֆինանսական ծառայություններ ու ստանալ հնարավորություն ներգրավելու առավել մատչելի ու երկարաժամկետ փոխառություններ՝ վարկային պորտֆելի հետագա աճին նպաստելու նպատակով: Ընկերությունը սրբնթաց աճ է գրանցել իր գործառնական գրասենյակների ցանցի ընդլայնման գործում և 2012թ. վերջին ուներ 25 մասնաճյուղեր: 2016թ. վերջին մասնաճյուղերի քանակը նախատեսվում է հասցնել 40-ի: Որպես բանկ վերագրանցվելուց հետո յուրաքանչյուր մասնաճյուղ Հայաստանի

քաղաքային ու գյուղական համայնքներին կառաջարկի ծառայությունների առավել ընդլայնված շարք՝ մարքեթինգային և գովազդային քաղաքականության ընդլայնման և հզորացման շնորհիվ:
Որպես առաջիկա վերակազմակերպման գործընթացի մաս՝ 2012թ. հունիսին բաժնետերերի ընդհանուր ժողովը հաստատեց կանոնադրական կապիտալի ավելացումը 3,126,990 հազ. դրամով թվով 312,699 բաժնետոմսերի թողարկման միջոցով, որից 850,000 հազ. դրամը չբաշխված շահույթի հաշվին, իսկ մնացած 2,276,990 հազ. դրամը՝ բաժնետերերի կողմից տրամադրված կանխիկ ներդրումների հաշվին:

Ընկերության գլխամասային գրասենյակը գտնվում է Երևանում, իսկ 25 մասնաճյուղեր տեղակայված են Հայաստանի ողջ տարածքում:

Ընկերության իրավաբանական և փոստային հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Ազաթանգեղոսի 2ա
2012 թվականին Ընկերության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 537 մարդ (2011թ-ին՝ 436):

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են *2013 թվականի մարտի 15-ին Ընկերության Տնօրենների խորհրդի* կողմից:

2. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Միջազգային Հաշվապահական Ստանդարտների Խորհրդի կողմից թողարկված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների («ՖՀՄՍ») և Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Մեկնաբանությունների Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների պահանջների համաձայն:

Պատրաստման հիմունքների այլ չափանիշներ

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ենթադրության հիման վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության հիմունքով և կշարունակի գործունեությունը մոտ ապագայում: Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերը 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների համար բացասական են, այնուամենայնիվ մենք դա չենք համարում որպես շարժառիթ ֆինանսական հաշվետվություններն այլ հիմունքով ներկայացնելու համար, քանի որ նշվածը սովորական երևույթ է միկրոֆինանսական կազմակերպությունների համար: Ղեկավարությունը և բաժնետերն ունեն Ընկերության հետագա զարգացման մտադրություններ և ինչպես նշված է Ծանոթագրություն 1-ում Ընկերությունն ավելացրել է իր բաժնետիրական կապիտալը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով (այսուհետ՝ հազ. դրամ), եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են վերագնահատված կամ իրական արժեքով, ինչպես բացահայտված է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականություններում: Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Ընկերությունն ընդհանուր առմամբ ներկայացնում է ֆինանսական վիճակի մասին իր հաշվետվությունն ըստ իրացվելիության: Ստացվելիք և վճարվելիք գումարներին վերաբերող վերլուծությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից հետո 12 ամիսների ընթացքում (ընթացիկ) և ֆինանսական վիճակի մասին հաշվետվության օրվանից ավելի քան 12 ամիսների ընթացքում (ոչ ընթացիկ) ներկայացված են Ծանոթագրություն 26-ում:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ), որը լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթն է:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով գուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ: Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

Տոկոսային եկամուտների և ծախսերի ճանաչումը

Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն ընկերություն և եկամտի գումարը կարող է չափվել արժանահավատորեն: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի ու տոկոսային եկամտի բաշխման մեթոդ է:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ, համապատասխան դեպքերում, ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները գեղչում է ճշգրիտ մինչև ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության գուտ հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը հաշվարկելիս դրամական միջոցների հոսքերը գնահատվում են՝ հաշվի առնելով ֆինանսական գործիքի բոլոր պայմանագրային պայմանները, սակայն հաշվի չեն առնվում ապագա պարտքային կորուստները: Այս հաշվարկը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր այն վճարները և «կետերը», որոնք արդյունավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, ինչպես նաև գործարքի հետ կապված ծախսումները և բոլոր այլ պարզավճարներն ու գեղչերը:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այդուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույքը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը գեղչելիս:

Իրական արժեքով չափվող ակտիվների գծով վաստակած տոկոսագումարները դասակարգվում են որպես տոկոսային եկամուտ:

Այլ եկամուտների ճանաչում

Ծառայության վճարների և միջնորդավճարների եկամտագրում

Վարկի տրամադրման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և ճանաչվում են որպես վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի պայմաններով վարկային համաձայնության, վարկային պարտավորության ստանձնման վճարները հետաձգվում են հարակից ուղղակի ծախսումների հետ միասին և հետագայում ճանաչվում որպես տրամադրված վարկի արդյունավետ տոկոսադրույքի ճշգրտում: Երբ քիչ հավանական է, որ վարկ տրամադրելու պարտավորությունը կհանգեցնի որոշակի վարկային համաձայնագրի, վարկ տրամադրելու պարտավորության ստանձնման վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում վարկի տրամադրման պարտավորության մնացորդային ժամանակահատվածի ընթացքում: Այն դեպքում, երբ վարկ տրամադրելու պարտավորությունն ավարտվում է առանց վարկի տրամադրման, ապա վարկ տրամադրելու պարտավորության վճարները ճանաչվում են ֆինանսական արդյունքում՝ պարտավորության ավարտի պահին: Վարկի սպասարկման վճարները եկամտագրվում են, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են: Բոլոր այլ միջնորդավճարները ճանաչվում են այն ժամանակ, երբ ծառայությունները մատուցվում են:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են կանխիկ միջոցները, թղթակցային հաշիվների մնացորդները, որոնք գերծ են սահմանափակումներից և ժամկետային ավանդները, որոնց

մարման նախնական ժամկետը չի գերազանցում 90 օրը և որոնք ծանրաբեռնված չեն պայմանագրային պարտավորություններով:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կանոնավոր կերպով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների կանոնավոր կերպով գնումները, որոնք հետագայում առուվաճառքի ու մարման ամսաթվերի միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվելու են իրական արժեքով, հաշվառվում են նույն կերպ ինչպես ձեռքբերված գործիքները:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով վերաչափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից ու նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ածանցյալ ֆինանսական գործիքները, ներառյալ արտարժույթի փոխանակման պայմանագրերը, արժույթային ու տոկոսադրույքի սվոպները, ինչպես նաև այլ ածանցյալ գործիքները, որոնք ունեն դրական իրական արժեք, բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նշանակվել ու օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, սկզբնապես ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում սկզբնական արժեքով (ներառյալ գործարքի հետ կապված ծախսումները) և հետագայում վերաչափվում իրական արժեքով: Իրական արժեքի չափումը տեղի է ունենում գնանշված շուկայական գներով, դրամական հոսքերի գեղջման մոդելով կամ օպցիոնի/սվոպի գների մոդելով տարվա վերջին՝ կախված գործարքի տիպից:

Ածանցյալ ֆինանսական գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են արտարժույթի առք ու վաճառքից զուտ օգուտներում:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Առևտրային դեբիտորական պարտքերը, վարկերը և այլ դեբիտորական պարտքերը, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարներ և գնանշված չեն գործող շուկայում (ներառյալ բանկերից ստացվելիք միջոցները, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական ակտիվներ) դասակարգվում են որպես վարկեր և դեբիտորական պարտքեր: Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են անորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և հաշվի առնելով արժեզրկումից կորուստները: Տոկոսային եկամուտը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, երբ տոկոսները ոչ էական են:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով վերաչափվող ֆինանսական ակտիվների, յուրաքանչյուր հաշվետու ժամականաշրջանի վերջում գնահատվում են արժեզրկված լինելու հայտանիշների առկայության առումով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, երբ կա օբյեկտիվ վկայություն, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած դեպքերի արդյունքում ներդրումից ակնկալվող ապագա դրամական հոսքերը նվազել են:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների համար, արժեզրկված լինելու օբյեկտիվ վկայությունը կարող է ներառել

- Թողարկողի կամ փոխառուի զգալի ֆինանսական դժվարությունները կամ
- Պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը,
- Փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմակերպում,
- Ֆինանսական դժվարությունների հետևանքով տվյալ ֆինանսական ակտիվի գործող շուկայի վերացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ տեսակներ, ինչպիսիք են, օրինակ, վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք չեն համարվում արժեզրկված առանձին-առանձին, ի հավելումն գնահատվում են նաև խմբային հիմունքով արժեզրկման համար: Վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել Ընկերության՝ վճարումների հավաքագրման անցյալ փորձը, պորտֆելում ժամկետանց վճարումների քանակական աճը, ինչպես նաև ազգային և միջազգային տնտեսական պայմանների նկատելի փոփոխությունները, որոնք որոշակիորեն կապված են դեբիտորական պարտավորությունների չկատարման հետ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունն է:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը ուղղակիորեն նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով բոլոր ֆինանսական ակտիվների դեպքում, բացի վարկերից և դեբիտորական պարտքերից, որտեղ հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշիվների միջոցով: Երբ վարկը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհավաքագրելի, այն դուրս է գրվում պահուստի հաշվին: Նախկինում դուրս գրված գումարների հետագա հավաքագրումները նվազեցվում են պահուստի հաշվից: Պահուստային հաշվի փոփոխությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքում:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դեպքում, եթե հաջորդ ժամանակաշրջաններում արժեզրկումից կորուստը նվազում է և այդ նվազումն օբյեկտիվորեն կարող է կապված լինել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձության հետ, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է ֆինանսական արդյունքի միջոցով, այն չափով, որ ներդրման հաշվեկշռային արժեքը արժեզրկումից կորուստը հակադարձելու ամսաթվին չգերազանցի ամորտիզացված արժեքը, որը կլինի, եթե արժեզրկումից կորուստը ճանաչված չլիներ:

Վերանայված վարկեր

Հնարավորության դեպքում Ընկերությունը նախընտրում է վերանայել վարկերը գրավը բռնագանձելու փոխարեն: Սա կարող է ներառել վճարման ժամկետների երկարաձգում և վարկավորման նոր պայմանների համաձայնեցում: Պայմանների վերանայումից հետո արժեզրկումը չափվում է կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը, որը հաշվարկված էր մինչ վերանայումը և վարկն այլևս չի համարվում կետանցված: Ղեկավարությունը շարունակաբար հսկում է վերանայված վարկերը

համոզվելու համար, որ բոլոր չափանիշները բավարարվում են և ապագա վճարումները հավանական է, որ կկատարվեն: Այդ վարկերը շարունակում են մնալ անհատական և խմբային արժեզրկման գնահատման ենթակա, ինչը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույթի կիրառմամբ:

Վարկերի և կանխավճարների դուրս գրում

Վարկերի և կանխավճարների արժեզրկումից կորուստները վերագրվում են պահուստներին, երբ համարվում են անհավաքագրելի: Վարկերը և կանխավճարները դուրս են գրվում Ընկերության ղեկավարության կողմից գումարների հավաքագրման ուղղությամբ իրականացված բոլոր հնարավորություններն օգտագործելուց և գրավները վաճառելուց հետո: Դուրս գրված գումարների հետագա հավաքագրումը համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում արտացոլվում է որպես ֆինանսական ակտիվների արժեզրկման պահուստներին կատարած մասհանումների վերադարձ հավաքագրման ժամանակաշրջանում:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքները կամ երբ Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքները, բայց պարտավորվում է երրորդ կողմին փոխանցել ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին, և երբ Ընկերությունը կամ փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի ու օգուտների զգալի մասը, կամ չի փոխանցում և չի պահպանում ակտիվի գծով ռիսկերի ու օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Եթե ստացողը փոխանցման համար առանց լրացուցիչ սահմանափակումների պարտադրման անհրաժեշտության, գործնականում չի կարող վաճառել ակտիվներն ամբողջությամբ այլ երրորդ կողմերի, ապա Ընկերությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Եթե կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանում է փոխանցված ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա կազմակերպությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ: Եթե կազմակերպությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, ապա կազմակերպությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ եկամտում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Եթե կազմակերպության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ կազմակերպությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոն), ապա կազմակերպությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները, ներառյալ այլ փոխառու միջոցները, ստորադաս փոխառությունները և այլ ֆինանսական պարտավորությունները, սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ հանած գործարքի հետ կապված ծախսերը:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Տոկոսային ծախսերը ճանաչվում են իրական օգուտի հիմունքով: Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի բաշխման մեթոդ է:

Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ նույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը կնքում է գործարքներ տարբեր ածանցյալ ֆինանսական գործիքներով, այդ թվում՝ արտարժույթի սվոպեր և արտարժույթի փոխանակման պայմանագրեր: Նման ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահվող և դրանց հաշվառումն իրականացվում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման քաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք չափվում են իրական արժեքով: Կախված գործիքի շուկայական կամ պայմանագրային արժեքից, ինչպես նաև մի շարք այլ գործոններից, իրական արժեքը որոշվում է շուկայական գնանշումներով կամ գնային մոդելներով:

Ածանցյալ ֆինանսական գործիքներ համարվում են ակտիվներ, եթե դրանց իրական արժեքը դրական է և պարտավորությունները՝ եթե դրանց արժեքը բացասական է: Գործարքների շահույթը և վնասը վերոնշյալ գործիքների դեպքում գրանցվում են համապարփակ եկամտի մասին հաշվետվություններում՝ որպես իրական արժեքով շահույթի և վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների (պարտավորությունների) գործարքներից առաջացած զուտ օգուտ կամ վնաս: Ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխությունները ներառվում են օգուտում կամ վնասում:

Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն, երբ վարձակալության պայմաններով վարձակալին են անցնում վարձակալության հետ կապված բոլոր էական ռիսկերը և օգուտները: Մնացած վարձակալությունները համարվում են գործառնական վարձակալություններ:

Կազմակերպությունը որպես վարձակալ

Գործառնական վարձակալության վճարները ծախսագրվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ որևէ այլ պարբերական հիմունք ավելի ճշգրիտ է

ներկայացնում վարձակալությունից տնտեսական օգուտների ստացման ժամանակային բաշխումը: Գործառնական վարձակալության պայմանագրով նախատեսված պայմանական վարձավճարները ծախսագրվում են այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման կորուստները, եթե այդպիսիք կան:

Մաշվածությունը հաշվարկվում է հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի հիման վրա և նախատեսված է գրոյացնելու ակտիվների արժեքը դրանց օգտակար ծառայության վերջում: Մաշվածությունը հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով հետևյալ օգտակար ծառայության ժամկետներով՝

- Կապի և հաղորդակցության սարքավորումներ և համակարգիչներ — 3 տարի,
- Գրասենյակային գույք — 5 տարի,
- Փոխադրամիջոցներ — 5 տարի,
- Այլ հիմնական միջոցներ — 5 տարի:

Վարձակալված ակտիվների բարելավումները կապիտալացվում են և ամորտիզացվում գծային մեթոդով՝ տաս տարի ժամկետով: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների նկատմամբ մաշվածություն չի հաշվարկվում:

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին գնահատելու համար, թե արդյոք նրանց հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը: Փոխհատուցվող գումարը իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսումները) ու օգտագործման արժեքից առավելագույնն է: Երբ հաշվեկշռային արժեքը գերազանցում է ակնկալվող փոխհատուցվող գումարը, ակտիվների արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեզրկումը ճանաչվում է համապատասխան ժամանակաշրջանում և ներառվում գործառնական ծախսերում: Արժեզրկան գծով ծախսերի ճանաչումից հետո հիմնական միջոցների մաշվածության գծով ծախսերը ճշգրտվում են ապագա ժամանակաշրջանների համար՝ ակտիվների վերանայված արժեքի ու մնացորդային արժեքի (եթե այդպիսին առկա է) տարբերությունը ակտիվի մնացորդային օգտակար ծառայության ընթացքում պարբերական հիմունքով բաշխելու համար:

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ, երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրս բերումից առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի վաճառքից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է ֆինանսական արդյունքում:

Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ

Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները, որոնք առանձին են ձեռք բերվել հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ

նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքը կորուստները: Ոչ նյութական ակտիվները գնահատվում են արժեքը կամ տեսանկյունից, երբ կան հայտանիշներ, որ ոչ նյութական ակտիվները կարող են լինել արժեքավոր:

Ոչ նյութական ակտիվների ապաճանաչում

Ոչ նյութական ակտիվները ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են ֆինանսական արդյունքում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Նյութական և ոչ նյութական ակտիվների արժեքը, բացի գուղվից

Յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում Ընկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները որոշելու համար արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեքը կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա գնահատվում է ակտիվների փոխհատուցվող գումարը, որպեսզի գնահատվեն արժեքը կորուստները (եթե այդպիսիք կան): Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Ընկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման խելամիտ ու հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել խելամիտ ու հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեքը կորուստի համար առկա տարեկան մեկ անգամ, ինչպես նաև երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեքը կորցնել լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) ու օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի կիրառելով մինչև հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է ավելի քիչ քան հաշվեկշռային արժեքը, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Արժեքը կորուստից կորուստ անհապաղ ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե սվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինին դեպքում արժեքը կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեքը կորուստից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքին, որը կլինի, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեքը կորուստ ճանաչված չլիներ: Արժեքը կորուստից կորուստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է ֆինանսական արդյունքում, եթե սվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեքը կորուստից կորուստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

Ընթացիկ հարկը

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է տարվա հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում ներկայացվող շահույթից եկամտի ու ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույքաչափերը:

Գործունեության հետ կապված հարկեր

Հայաստանի Հանրապետությունում կիրառվում են տարբեր այլ հարկատեսակներ ևս, որոնց գծով գումարների հաշվարկը կապված է Ընկերության գործունեության հետ: Այս հարկերը ներառվում են համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում՝ որպես գործառնական ծախսերի բաղադրիչ:

Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկը չի ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են գուրվիլից կամ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով կապված հիմնական միջոցների և հաճախորդներին տրված վարկերի հետ, բացառությամբ այն դեպքերի, երբ Ընկերությունը ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերության մարման ժամանակային բաշխումը, կամ հավանական է, որ ժամանակավոր տարբերությունը չի մարվի տեսանելի ապագայում: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով կապված վերը նշված ներդրումների հետ ճանաչվում են միայն այն չափով, որով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող է օգտագործվել ժամանակավոր տարբերությունը և ժամանակավոր տարբերությունը կմարի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է վերանայվի յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Կազմակերպությունը պետք է նվազեցնի հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները պետք է չափվեն հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ

են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումը պետք է արտացոլի հարկային հետևանքները, որոնք կառաջանան կախված այն եղանակից, որով կազմակերպությունը, հաշվետու ժամանակաշրջանի վերջում, ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են ֆինանսական արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում, ինչի դեպքում ընթացիկ ու հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են այլ համապարփակ եկամուտներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և պարտականության գումարը հավաստիորեն կարող է գնահատվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերն ու անորոշությունները: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման նպատակով տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի հնարավորությունը շատ փոքր է: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ընդ որում՝ դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

Արտարժույթ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս արտարժույթով կատարված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում արտարժույթով արտահայտված դրամային հոդվածները (տարրերը) վերահաշվարկվում են այդ օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, վերահաշվարկվում են իրական արժեքի սահմանման օրվա փոխարժեքով: Արտարժույթով հաշվարկված սկզբնական արժեքով հաշվառվող ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստելիս Ընկերության կողմից կիրառված փոխարժեքները տարվա վերջում հետևյալն են՝

	2012թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ	2010 թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
ՀՀ Դրամ/1 ԱՄՆ Դոլար	403.58	385.77	363.44
ՀՀ Դրամ/1 Եվրո	532.24	498.72	481.16

Գրավ

Ընկերությունը որպես հաճախորդի պարտավորությունների ապահովման միջոց ընդունում է գրավ, երբ դա նպատակահարմար է համարում: Գրավը հիմնականում լինում է հաճախորդի ակտիվների նկատմամբ կոշտ գրավի տեսքով և շնորհում է Ընկերությանը պահանջի իրավունք այս ակտիվների նկատմամբ հաճախորդի առկա ու ապագա պարտավորությունների դիմաց:

Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալի համալրումները ճանաչվում են սկզբնական արժեքով: Թողարկված նոր բաժնեմասերին ուղղակիորեն վերագրելի ծախսերը, բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության միավորումներից, նվազեցվում են սեփական կապիտալից հաշվի առած շահութահարկը:

Կարևոր հաշվապահական դատողություններ և գնահատումների հետ կապված անորոշության հիմնական աղբյուրները

Ընկերության հաշվապահական քաղաքականությունը կիրառելիս Ընկերության ղեկավարությանը անհրաժեշտ է կատարել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնք այլ աղբյուրներից ակնհայտ չեն երևում: Գնահատումներն ու դրա հետ կապված ենթադրությունները հիմնված են նախկին փորձի և այլ համապատասխան գործոնների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումներում փոփոխությունները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, երբ փոփոխությունը տեղի է ունենում, եթե փոփոխությունը վերաբերում է միայն այդ ժամանակաշրջանին կամ փոփոխությունը ճանաչվում է այդ և ապագա ժամանակաշրջաններում, եթե փոփոխությունն ազդում է ընթացիկ և ապագա ժամանակաշրջանների վրա:

Անորոշության գնահատման չափանիշների հիմնական աղբյուրները

Ստորև ներկայացվում են ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և ժամանակաշրջանի վերջի դրությամբ գնահատումներից բխող անորոշության այլ առանցքային աղբյուրները, որոնք կրում են ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների հաջորդող ֆինանսական տարում էական ճշգրտումների առաջացման զգալի ռիսկ:

Վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկում

Ընկերությունը կանոնավոր կերպով վերանայում է իր վարկերն ու դեբիտորական պարտքերը, որպեսզի դրանք գնահատի արժեզրկման համար: Ընկերության վարկերի արժեզրկման պահուստները սահմանվում են վարկերի և դեբիտորական պարտքերի պորտֆելում առաջացած արժեզրկումից կորուստները ճանաչելու համար: Ընկերությունը վարկերի ու դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստին կատարվող մասհանումների վերաբերյալ գնահատումները դիտարկում է որպես գնահատման անորոշությունների հիմնական աղբյուր, որովհետև ա) դրանք բավականին զգայուն են մի

Ժամանակաշրջանից մյուսը տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ հիմնված են չվճարումների չափերի ու ապագա կորուստների գնահատման վերաբերյալ ենթադրությունների վրա, որոնք կատարվել են անցյալ գործունեության փորձի հիման վրա և բ) ցանկացած զգալի տարբերություն Ընկերության կողմից գնահատված կորուստների և դրանց փաստացի չափերի միջև կհանգեցնի անհրաժեշտության, որ Ընկերությունը գրանցի հավելյալ պահուստներ, որոնք կարող են ունենալ նշանակալի ազդեցություն նրա ապագա ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը կիրառում է անհատական և խմբային գնահատումների համադրություն հաշվետու ամսաթվի դրությամբ արժեզրկման պահուստին մասհանումները որոշելիս: Անհատական գնահատումները կիրառվում են այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված նշանակալի են: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց մնացորդը սեփական կապիտալի 0.5%-ից ավել է կազմում, համարվում են առանձին վերցված նշանակալի:

Առանձին վերցված նշանակալի վարկերն ու դեբիտորական պարտքերը, որոնք արժեզրկված չեն, ինչպես նաև բոլոր այն վարկերն ու դեբիտորական պարտքերը, որոնք անհատապես չեն գնահատվել, ներառվում են խմբային հիմունքով գնահատվող վարկերի ու դեբիտորական պարտքերի մեջ: Խմբային հիմունքով գնահատվող վարկերն ու դեբիտորական պարտքերը խմբավորվում են ըստ նմանատիպ վարկային ռիսկի բնութագրիչների ու կետակցվածության կարգավիճակի և գնահատվում համապատասխանաբար: Խմբային հիմունքով գնահատման մեթոդոլոգիայի խնդիրն է ապահովել, որ արժեզրկումից կորստի պահուստը արտացոլի կորստի պատճառ հանդիսացող իրադարձությունները, որոնք արդեն տեղի են ունեցել, սակայն դեռ չեն գնահատվել անհատական հիմունքով:

Գործընթացը կիրառում է անցյալ տեղեկատվություն և ներկա նկատելի տվյալներ, որոնք արտահայտում են ներկա տնտեսական ու քաղաքական հանգամանքները և թե ինչ կերպով դրանք կարող են ազդել վարկերի ու դեբիտորական պարտքերի ընթացիկ պորտֆելի վրա: Ընկերությունը հնարավորություն չունի կանխատեսելու հանգամանքների փոփոխությունները Հայաստանում և դրանց հնարավոր ազդեցությունները ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստների պահուստի համարժեքության վրա ապագա ժամանակաշրջաններում:

2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախառն վարկերն ու դեբիտորական պարտքերը կազմում էին համապատասխանաբար՝ 17,783,941 և 13,693,898 հազ. դրամ, իսկ պահուստը՝ համապատասխանաբար 85,094 և 84,577 հազ. դրամ:

Կապակցված կողմեր

Կապակցված կողմերի բացահայտումը պահանջում է ղեկավարության նշանակալի դատողությունների կիրառում կապակցված կողմերի հետ հարաբերությունները որոշելիս:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցները ճանաչվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը նմանատիպ ակտիվների առնչությամբ անցյալ փորձի վրա հիմնված ղեկավարության դատողության խնդիր է: Ակտիվի օգտակար ծառայության ժամկետը որոշելիս ղեկավարությունը հաշվի է առնում ակնկալվող օգտագործումը, գնահատված տեխնիկական կամ բարոյական մաշվածությունը, ֆիզիկական մաշվածքը և ֆիզիկական միջավայրը, որում գործարկվում է ակտիվը: Նշված հանգամանքներում կամ գնահատումներում որևէ փոփոխություն կարող է բերել ապագա մաշվածության դրույքաչափերի փոփոխության:

Հետաձգված հարկային ակտիվների իրացվելիություն

Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ հաշվետու ամսաթվի դրությամբ հետաձգված հարկային ակտիվների արժեքի գնահատման ոչ մի պահուստի ստեղծման անհրաժեշտություն գոյություն չունի, քանի որ առավել քան հավանական է, որ հետաձգված հարկային ակտիվը ամբողջությամբ կիրացվի: Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է համապատասխանաբար 3,190 և 8,939 հազ. դրամ:

3. ՆՈՐ ԵՎ ՎԵՐԱՆԱՑՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՆԵՐԻ (ՖՀՄՍ) ԿՐԻԱՌՈՒՄԸ

Ընկերությունն ընդունել է հետևյալ նոր և վերանայված ստանդարտներն ու մեկնաբանությունները՝ թողարկված ՀՀՄՍԲ-ի և ՖՀՄՍԿ-ի կողմից, որոնք կիրառվել են Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունների համար 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

ՖՀՄՍ-ների ուղղումներ, որոնք ազդում են միայն ներկայացման և բացահայտումների վրա

Ուղղումներ ՀՀՄՍ 1-ում՝ «Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացում»

Ընկերությունը կիրառել է ՀՀՄՍ-1՝ «Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացումը», ուժի մեջ մտնելուց առաջ (2012թ.-ի հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Ուղղումները ներկայացնում են Համապարփակ եկամտի մասին և Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունների համար նոր տերմինալոգիա: ՀՀՄՍ 1-ի՝ «Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացումը» ուղղումներում «Համապարփակ եկամտի մասին հաշվետվություն»-ը վերանվանվել է «Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամուտների մասին հաշվետվություն», իսկ «Ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն»-ը վերանվանվել է «Շահույթի կամ վնասի մասին հաշվետվություն»: ՀՀՄՍ 1-ի՝ «Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացումը» ուղղումները շարունակում են թույլատրել այլընտրանք՝ ներկայացնել շահույթը կամ վնասը և այլ համապարփակ եկամուտները կամ մեկ հաշվետվությամբ կամ երկու առանձին, սակայն իրար հաջորդող հաշվետվություններում: Այնուամենայնիվ, ՀՀՄՍ 1-ի ուղղումները պահանջում են, որպեսզի այլ համապարփակ եկամտի տարրերը այլ համապարփակ եկամտի բաժնում խմբավորվեն երկու կատեգորիայով՝ (ա) տարրեր, որոնք հետագայում չեն վերադասակարգվի շահույթում կամ վնասում, (բ) տարրեր, որոնք հետագայում կվերադասակարգվեն շահույթում կամ վնասում, եթե որոշակի պայմաններ բավարարվեն: Այլ համապարփակ եկամտի տարրերի շահութահարկը պահանջվում է բաշխել նույն սկզբունքով՝ ուղղումները չեն փոփոխում այլ համապարփակ եկամտի տարրերի այլընտրանքային ներկայացումը՝ կամ մինչ հարկումը կամ հարկումից հետո: Ուղղումները հետընթաց կերպով են կիրառվել, հետևաբար այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացումը արդեն իր մեջ արտացոլում է փոփոխությունները: Բացի վերոնշյալ ներկայացման փոփոխություններից, ՀՀՄՍ 1-ի՝ «Այլ համապարփակ եկամտի տարրերի ներկայացումը», ուղղումների կիրառումը ոչ մի կերպ չի անդրադառնում ֆինանսական արդյունքների, այլ համապարփակ եկամտի և ընդամենը համապարփակ եկամտի վրա:

Ուղղումներ ՀՀՄՍ 1-ում՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում»

(որպես ՖՀՄՍ-ների 2009-2011թթ. ժամանակաշրջանի տարեկան բարեփոխումների մաս՝ թողարկված 2012-ի մայիսին)

Ընկերությունը կիրառել է ՀՀՄՍ 1-ի փոփոխությունները որպես ՖՀՄՍ-ների 2009-2011թթ. ժամանակաշրջանի տարեկան բարելավումների մի մաս ուժի մեջ մտնելուց առաջ (2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):

ՀՀՄՍ 1՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը» պահանջում է, որ երբ կազմակերպությունը փոփոխում է իր հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետընթաց կերպով կամ իրականացնում է հետընթաց վերաներկայացում կամ վերադասակարգում, ներկայացնի ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն նախորդ համադրելի ժամանակաշրջանի սկզբի դրությամբ (ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվություն): ՀՀՄՍ 1՝ «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը», ստանդարտի ուղղումները պարզաբանում են, որ կազմակերպությունը պետք է ներկայացնի ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվությունը միայն այն դեպքում, երբ հաշվապահական քաղաքականության հետընթաց կիրառությունը, վերաներկայացումը կամ վերադասակարգումը էականորեն ազդում է ֆինանսական վիճակի մասին երրորդ հաշվետվության տեղեկատվության վրա և որ երրորդ հաշվետվությանն ուղեկցող համապատասխան ծանոթագրություններ չեն պահանջվում:

Ուղղումներ ՀՀՄՍ 12 Շահութահարկ Ստանդարտում՝ «Հետաձգված Հարկ. Հիմքում ընկած ակտիվների իրացվելիությունը»

Ընկերությունը կիրառել է ՀՀՄՍ 12-ի՝ Շահութահարկ «Հետաձգված հարկ. հիմքում ընկած ակտիվների իրացվելիությունը» ուղղումը ընթացիկ տարում: Ըստ ուղղման՝ ներդրումային գույքը, որը հաշվառվում է իրական արժեքի մոդելի համաձայն ՀՀՄՍ 40 «Ներդրումային Գույք»-ի, ենթադրվում է, որ իրացվելու է ամբողջությամբ վաճառքի միջոցով՝ հետաձգված հարկի հաշվարկման նպատակներով, եթե նշված ենթադրությունը հերքելի չէ: Նշված ուղղումների կիրառությունը ազդեցություն չի ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

3.1 Նոր և վերանայված ՖՀՄՍ-ներ, որոնք թողարկվել, բայց դեռ ուժի մեջ չեն մտել

Ընկերությունը չի կիրառել հետևյալ նոր և վերանայված ՖՀՄՍ-ները, որոնք թողարկվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել՝

- ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»¹;
- ՖՀՄՍ 13 «Իրական արժեքի չափում»²;
- Ուղղումներ ՖՀՄՍ 7-ում՝ *Ֆինանսական Գործիքներ. Բացահայտումները՝ «Բացահայտումներ. Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում»*³;
- Փոփոխություններ ՖՀՄՍ 9-ում՝ *Ֆինանսական Գործիքներ* և ՖՀՄՍ 7 Ֆինանսական Գործիքներ, Բացահայտումներ, «ՖՀՄՍ 9-ի պարտադիր կիրառության ամսաթիվը և անցումային բացահայտումներ»¹;
- ՀՀՄՍ 19 (վերանայված՝ 2011թ.) «Աշխատակիցների հատուցումներ»²;
- ՀՀՄՍ 27 (վերանայված՝ 2011թ.) «Առանձին ֆինանսական Հաշվետվություններ»³;
- Ուղղումներ ՀՀՄՍ 32-ում՝ Ֆինանսական Գործիքներ. Ներկայացումը, «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում»⁴;
- ՖՀՄՍ-ների ուղղումներ. ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումներ 2009-2011թթ. ժամանակաշրջանի համար, բացառությամբ ՀՀՄՍ 1-ի փոփոխությունների (տես վերևում)²:

¹ Կիրառելի է 2015-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և վաղաժամ կիրառությունը թույլատրելի է:

² Կիրառելի է 2013-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և վաղաժամ կիրառությունը թույլատրելի է:

³ Հինգ ստանդարտներից յուրաքանչյուրը կիրառելի է 2013-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և վաղաժամ կիրառությունը թույլատրելի է, եթե բոլոր մյուս ստանդարտները «հինգի փաթեթից» նույնպես վաղաժամ կկիրառվեն (բացառությամբ ՖՀՄՍ 12-ի, որը առանձին կարելի է կիրառել վաղաժամ):

⁴ Կիրառելի է 2014-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և վաղաժամ կիրառությունը թույլատրելի է:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական Գործիքներ

ՖՀՄՍ 9 Ֆինանսական Գործիքները, թողարկված 2009թ-ի նոյեմբերին և ուղղված 2010թ-ի հոկտեմբերին, նոր պահանջներ է ներկայացնում ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման, չափման և ապաճանաչման համար:

ՖՀՄՍ 9-ի հիմնական պահանջներն են՝

- Բոլոր ֆինանսական ակտիվները, որոնք գտնվում են ՀՀՄՍ 39՝ *Ֆինանսական գործիքներ, ճանաչումը և Չափումը*, ստանդարտի գործողության ոլորտում հետագայում պետք է չափվեն ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով: Մասնավորապես պարտքային ներդրումները, որոնք պահվում են մի բիզնես մոդելի շրջանակում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրից բխող դրամական հոսքերը և որոնք ունեն պայմանագրից բխող դրամական հոսքեր, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի ու մայր գումարի մնացորդի վրա հաշվարկվող սոկոսագումարների վճարումներ, սովորաբար պետք է հաշվառվեն ամորտիզացված արժեքով ապագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ: Բոլոր այլ պարտքային ներդրումներն ու սեփական կապիտալում ներդրումները չափվում են իրական արժեքով ապագա ժամանակաշրջանների վերջի դրությամբ: Ի հավելումն՝ ըստ ՖՀՄՍ 9՝ *Ֆինանսական Գործիքներ*, ստանդարտի ընկերությունները կարող են կատարել անբեկանելի ընտրություն սեփական կապիտալում ներդրումների իրական արժեքի փոփոխությունները (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներկայացնելու այլ համապարփակ եկամուտներում և միայն շահաբաժինների տեսքով եկամուտները ճանաչելու ֆինանսական արդյունքում:
- Ինչ վերաբերում է շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով վերաչափվող ֆինանսական պարտավորությունների չափմանը, ՖՀՄՍ 9՝ *Ֆինանսական գործիքներ*, ստանդարտը պահանջում է, որ ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է այդ պարտավորության վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ եկամուտներում, եթե պարտավորության վարկային ռիսկում տեղի ունեցած փոփոխությունների՝ այլ համապարփակ եկամուտներում ճանաչման ազդեցությունը չի առաջացնի կամ մեծացնի հաշվապահական անհամապատասխանությունը ֆինանսական արդյունքում: Իրական արժեքի փոփոխությունները, որոնք վերագրելի են ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին հետագայում չեն վերադասակարգվում ֆինանսական արդյունքին: Նախկինում, ՀՀՄՍ 39՝ *Ֆինանսական Գործիքներ*, ճանաչումը և Չափումը, ստանդարտի շրջանակներում ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունն ամբողջությամբ ճանաչվում էր շահույթում կամ վնասում:

Ընկերության ղեկավարությունը կանխատեսում է, որ ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքները ապագայում զգալի ազդեցություն կունենա Ընկերության հաշվետվությունների վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների առնչությամբ: Այնուամենայնիվ, մինչև մանրամասն վերլուծություն իրականացնելը ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքների ազդեցության առնչությամբ ողջամիտ գնահատական տալն իրագործելի չէ:

ՖՀՄՍ 13 Իրական Արժեքի Չափում

ՖՀՄՍ 13-ը սահմանում է ՖՀՄՍ-ների շրջանակներում բոլոր իրական արժեքների չափման մեկ միասնական ուղեցույց: ՖՀՄՍ 13-ը չի փոխում պահանջները, թե կազմակերպություններից երբ է պահանջվում կիրառել իրական արժեք, սակայն տրամադրում է ուղեցույց, թե ինչպես չափել իրական արժեքը ՖՀՄՍ-ների շրջանակներում, երբ իրական արժեքի կիրառումը պարտադիր է կամ թույլատրելի: Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափումը ստանդարտի գործողության ոլորտը բավականին ընդգրկում է. այն կիրառվում է և ֆինանսական գործիքների տարրերի և ոչ ֆինանսական գործիքների տարրերի համար, որոնց համար մյուս ՖՀՄՍ-ները, բացառությամբ առանձնահատուկ հանգամանքներից, պահանջում կամ թույլատրում են իրական արժեքով չափում ու գումարների բացահայտում: Ընդհանուր առմամբ, բացահայտման պահանջները ՖՀՄՍ 13 Իրական Արժեքի Չափում ստանդարտում առավել ծավալուն են, քան ներկայիս

ստանդարտներում պահանջվածը: Օրինակ՝ քանակական ու որակական բացահայտումները, որոնք հիմնված են իրական արժեքի եռամսկարդակ հիերարխիայի վրա և ներկայումս պահանջվում են միայն ֆինանսական գործիքների համար համաձայն ՖՀՄՍ 7 Ֆինանսական գործիքներ. Բացահայտումները ստանդարտի ՖՀՄՍ 13-ով կտարածվեն դրա գործողության ոլորտում գտնվող բոլոր ակտիվների ու պարտավորությունների վրա:

Ընկերության ղեկավարությունը կանխատեսում է, որ նոր ստանդարտի կիրառումը ֆինանսական հաշվետվություններում իր ազդեցությունը կունենա որոշակի գումարների վրա և ֆինանսական հաշվետվություններում առավել ծավալուն բացահայտումների կհանգեցնի:

Ուղղումներ ՖՀՄՍ 7-ում՝ Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ և ՀՀՄՍ 32 Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը ստանդարտներում՝ «Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցում և համապատասխան բացահայտումներ»

Սույն ուղղման համաձայն՝ կազմակերպությունները պարտավոր են տեղեկատվություն բացահայտել հաշվանցման իրականացման իրավունքի և համապատասխան պայմանագրերի վերաբերյալ (օրինակ՝ գրավի պայմանագրերը): Տվյալ բացահայտումներն օգտագործողների համար կապահովեն օգտակար տեղեկատվություն՝ գնահատելու հաշվանցման պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական վիճակի վրա: Նոր բացահայտումները պահանջվում են բոլոր ճանաչված ֆինանսական գործիքների համար, որոնք հաշվանցվում են համաձայն ՀՀՄՍ 32-ի՝ «Ֆինանսական գործիքներ. ներկայացումը»: Տեղեկատվության բացահայտման պահանջները կիրառվում են նաև ճանաչված ֆինանսական գործիքների նկատմամբ, որոնք հանդիսանում են իրավաբանորեն ամրագրված հաշվանցման գլխավոր պայմանագրի կամ նմանատիպ այլ պայմանագրի առարկա, անկախ այն բանից, ենթակա են դրանք հաշվանցման ՀՀՄՍ 32-ի համաձայն, թե ոչ: Ուղղումներն ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:

Սույն ուղղումների շրջանակներում պարզաբանվում է «տվյալ պահին տիրապետում է հաշվանցում իրականացնելու իրավաբանորեն հաստատված իրավունքին» արտահայտության նշանակությունը:

Բացահայտումները պետք է ներկայացվեն հետընթաց՝ բոլոր համադրելի ժամանակաշրջանների համար: Ընկերության ղեկավարությունը նախատեսում է, որ ՀՀՄՍ 32 և ՖՀՄՍ 7 ստանդարտների ուղղումների կիրառումը ապագայում կհանգեցնի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցման հետ կապված բացահայտումների ավելացմանը:

Ուղղումներ ՀՀՄՍ 19-ում՝ Աշխատակիցների հատուցումներ

ՀՀՄՍ 19-ում ուղղումն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ուղղումը ներմուծում է էական փոփոխություններ աշխատակիցների հատուցումների հաշվապահական հաշվառման մեջ, մասնավորապես բացառում է կենսաթոշակային պլանի ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունների հետաձգված ճանաչելու հնարավորությունը («միջանցքի մեթոդ»): Բացի այդ, ուղղումը սահմանափակում է գուտ կենսաթոշակային ակտիվների (պարտավորությունների) փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում տոկոսային եկամտի (ծախսի) և ծառայությունների գծով ծախսի չափով:

Ուղղումները ՀՀՄՍ 19-ում պահանջում են հետընթաց կիրառում: Ընկերության ղեկավարությունը չի կանխատեսում, որ ՀՀՄՍ 19 Աշխատակիցների հատուցումներ ստանդարտի վերանայումը նշանակալի ազդեցություն կունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ Ընկերությունը չունի սահմանված հատուցումների պլաններ:

2009-2011թթ. ժամանակաշրջանի ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումները՝ հրապարակված 2012 թ-ի մայիսին

2009-2011թթ. ժամանակաշրջանի ՖՀՄՍ-ների տարեկան բարեփոխումները ներառում են մի շարք ուղղումներ տարբեր ՖՀՄՍ-ներում: ՖՀՄՍ-ներում ուղղումները ներառում են

Ուղղումներ ՀՀՄՍ 32-ում՝ Ֆինանսական գործիքներ. Ներկայացումը

Տվյալ բարեփոխումը պարզաբանում է, որ բաժնետերերի օգտին վճարումների իրականացման հետ կապված շահութահարկը հաշվարկվում է ՀՀՄՍ 12-ի՝ Շահութահարկ, ստանդարտի համապատասխան: Ընկերության ղեկավարությունը կանխատեսում է, որ նշված ուղղումն ազդեցություն չի ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա, քանի որ վերջինս արդեն իսկ որդեգրել է այս մտտեցումը:

4. ՎԵՐԱՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՎԵՐԱԴԱՍԱԿԱՐԳՈՒՄՆԵՐ

Վերաներկայացումներ

2012թ-ին ղեկավարությունը անճշտություններ հայտնաբերեց 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման մեջ: Սահմանափակումներից գերծ, մինչև 90 օր մարման ժամկետով ժամկետային ավանդները գրանցված էին որպես պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում: Վերադասակարգումը կատարվել է համաձայն ՀՀՄՍ 8-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ», և մանրամասն ներկայացված է հետևյալ պարագրաֆում:

Սահմանափակումներից գերծ, մինչև 90 օր սկզբնական մարման ժամկետով ավանդները, որոնք կարճ ժամանակահատվածում կարող են փոխակերպվել դրամական միջոցների և ուստի համարվում են իրացվելի, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջներից վերադասակարգվել են որպես դրամական միջոցներ և դրանց համարժեքների: Այս վերադասակարգման արդյունքում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական հոսքերի մասին հաշվետվությունում գործառնական գործունեությունից ստացված դրամական հոսքերից կրճատվեցին այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների փոփոխությունից առաջացած հոսքերը, բացի այդ, այլ ոչ նշանակալի վերադասակարգումներ են կատարվել, 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության ներկայացմանը համապատասխանեցնելու համար:

Վերադասակարգումներ

Որոշակի վերադասակարգում է կատարվել ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացմանը համապատասխանեցնելու համար: Վաճառքի համար մատչելի ակտիվները ներկայացվել են առանձին այլ ակտիվներից՝ համաձայն ՖՀՄՍ 5 «Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և ընդհատված գործունեություն» բացահայտման պահանջների:

Ֆինանսական հաշվետվության յուրաքանչյուր տողի վերադասակարգումը 2011 և 2010թթ. տարվա վերջի դրությամբ ներկայացված է հետևյալ աղյուսակում՝

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

	Նախկինում ներկայացված		Ճշգրտման չափը		Վերաներկայացված	
	2011թ. դեկտեմբերի 31	2010թ. դեկտեմբերի 31	2011թ. դեկտեմբերի 31	2010թ. դեկտեմբե- րի 31	2011թ. դեկտեմբերի 31	2010թ. դեկտեմբե- րի 31
Ակտիվներ՝						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	123,061	135,485	1,110,800	424,036	1,233,861	559,521
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպութ- յունների նկատմամբ	1,110,800	424,036	(1,110,800)	(424,036)		
Այլ ակտիվներ	53,479	32,769	(5,191)	-	48,288	32,769
Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ	-	-	5,191	-	5,191	-

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

	Նախկինում ներկայացված 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Ճշգրտման գումարը՝ 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Վերաներկայացված 2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների և սարքավորումների և ոչ նյութական ակտիվների օտարումից վնաս	3,464	(1,721)	1,743
Արտարժույթի փոխարկումից և շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից զուտ շահույթ/ վնաս	(3,376)	-	(3,376)
Կուտակված տոկոսների զուտ նվազում/ավելացում	172,198	(23)	172,175
Մաշվածություն և ամորտիզացիա	72,751	132	72,883
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ Փոխարժեքի տատանումների ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդի վրա	(655,952)	655,952	-
	14,463	(16,493)	(2,030)
	-	-	-
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ, հաշվետու ժամանակաշրջանի սկիզբ	135,485	424,036	559,521
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ, հաշվետու ժամանակաշրջանի վերջ	123,061	1,110,800	1,233,861

5. ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ

	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Տոկոսային եկամուտը ներառում է՝		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտ		
- արժեզրկված ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտ	5,314,436	4,156,100
- չարժեզրկված ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտ	179,696	53,191
Ընդամենը տոկոսային եկամուտ	5,494,132	4,209,291
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտը ներառում է՝		
Հաճախորդներին տրված վարկերից տոկոսներ	5,314,436	4,156,100
Տոկոսներ բանկերում տեղաբաշխված միջոցներից մինչև երեք ամիս մարման ժամկետով	179,696	53,191
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտ	5,494,132	4,209,291
Տոկոսային ծախսը ներառում է՝		
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններից տոկոսային ծախս	1,665,611	1,143,598
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից տոկոսային ծախս	25,002	2,621
Ընդամենը տոկոսային ծախս	1,690,613	1,146,219
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններից տոկոսային ծախսը ներառում է՝		
Փոխառու միջոցներից տոկոսային ծախս	1,529,069	1,009,739
Ստորադաս փոխառությունից տոկոսային ծախս	136,542	133,859
Ընդամենը ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններից տոկոսային ծախս	1,665,611	1,143,598
Զուտ տոկոսային եկամուտ մինչև տոկոսակիր ֆինանսական ակտիվների գծով հնարավոր կորուստներին մասհանումները	3,803,519	3,063,072

6. Արժեզրկված կորուստների պահուստ

Տոկոսակիր ակտիվների արժեզրկված կորուստների պահուստի շարժերը հետևյալն են՝

	Առևտուր	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
2011թ. հունվարի 1	23,412	19,837	3,930	2,936	1,527	11,035	62,677
Հավելյալ ճանաչված պահուստներ	8,182	4,458	(14,624)	11,060	1,184	3,855	14,115
Ակտիվների դուրս գրում	0	(7,606)	(20,385)	(23,132)	(897)	0	(52,020)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնումը	0	10,079	36,382	13,098	246	0	59,805
2011թ. դեկտեմբերի 31	31,594	26,768	5,303	3,962	2,060	14,890	84,577
Հավելյալ ճանաչված պահուստներ	1,003	657	2,455	14,184	349	(1,830)	16,818
Ակտիվների դուրս գրում	0	(17,112)	(24,713)	(49,663)	(2,934)	(2,645)	(97,067)
Նախկինում դուրս գրված ակտիվների վերականգնումը	38	17,979	24,258	35,128	2,332	1,031	80,766
2012թ. դեկտեմբերի 31	32,635	28,292	7,303	3,611	1,807	11,446	85,094

7. ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹ ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻՑ

Արտարժույթային գործարքներից զուտ շահույթը ներառում է՝

	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դիվիդ, զուտ	30,318	3,975
Արտարժույթի փոխարկումից, զուտ	(21,722)	(393)
Ընդամենը զուտ շահույթ արտարժույթային գործարքներից	8,596	3,582

8. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են՝	2012թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ, պարգևավճարներ և այլ հատուցումներ աշխատակիցներին	1,758,654	1,419,303
Սոցիալական ապահովագրության վճարներ	173,804	141,357
Վերապատրաստման ծախսեր	19,841	15,785
	<hr/>	<hr/>
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	<u>1,952,299</u>	<u>1,576,445</u>

9. ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Այլ գործառնական ծախսերը ներառում են՝	2012թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Ռոյալթի և կառավարման վճարներ	321,391	189,107
Գործառնական վարձակալության գծով ծախսեր	169,829	121,572
Հարկեր՝ բացառությամբ շահութահարկի	156,200	100,662
Հիմնական միջոցների վերանորոգման և սպասարկման ծախսեր	90,499	71,150
Գործուղման ծախսեր	63,217	33,257
Գրասենյակային ծախսեր	58,078	39,675
Խորհրդատվական կամ այլ ծառայությունների գծով ծախսեր	40,376	19,043
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	32,530	34,878
Անվտանգության ծախսեր	29,036	22,500
Ներկայացուցչական ծախսեր	25,071	21,378
Ապահովագրության գծով ծախսեր	2,413	1,322
Գովազդի ծախսեր	790	7,276
Հիմնական միջոցների օտարումից կորուստներ	749	1,743
Տուգանքներ	323	825
Այլ ծախսեր	68,002	59,740
Ընդամենը այլ գործառնական ծախսեր	<u>1,058,504</u>	<u>724,128</u>

10. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

Ընկերությունը գնահատում և գրանցում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների ու պարտավորությունների հարկային բազան համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը տարբերվում է ՖՀՄՍ-ից:

Ընկերությունն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի իմաստով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի իմաստով չհարկվող որոշակի եկամուտներից:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ժամանակավոր տարբերությունների նկատմամբ, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և դրանց հարկման բազաների միջև: 2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի

դրությամբ առկա ժամանակավոր տարբերությունները մեծամասնորեն վերաբերում են եկամուտի ու ծախսի ճանաչման համար տարբեր մեթոդների/ժամկետների կիրառությանը, ինչպես նաև որոշակի ակտիվների հարկային և հաշվեկշռային բազաների ժամանակավոր տարբերություններին:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույքաչափը՝ 20%, որը ՀՀ-ում վճարում են կորպորատիվ ձեռնարկությունները հարկվող շահույթի համար (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

Ժամանակավոր տարբերությունները 2012թ.-ի և 2011թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ներկայացված են հետևյալ աղյուսակում՝

	2012թ. դեկտեմբերի 31	2011թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվները/պարտավորությունները վերաբերում են</i>		
Բանկերում տեղաբաշխված միջոցներ՝ մինչ երեք ամիս մարման ժամկետով	(5,327)	(386)
Հաճախորդներին տրված փոխառություններ	(21,598)	(20,772)
Փոխառու միջոցներ	(6,172)	0
Այլ պարտավորություններ	36,287	30,097
	<hr/>	<hr/>
Զուտ հետաձգված հարկային ակտիվ	3,190	8,939
	<hr/> <hr/>	<hr/> <hr/>

2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ին՝ ավարտված տարվա համար արդյունավետ հարկային դրույքի համադրությունը ներկայացված է ստորև

	2012թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի	2011թ. դեկտեմբերի 31- ին ավարտված տարի
Շահույթ մինչև հարկումը	679,265	784,251
	0	0
Մահմանված դրույքաչափով հարկ (20%)	135,853	156,850
Մշտական տարբերություններից հարկի ազդեցությունը	(2,496)	1,347
	0	0
Շահութահարկի գծով ծախս	133,357	158,197
	0	0
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	127,608	170,711
Հետաձգված հարկային ծախս/(օգուտ)՝ ճանաչված ընթացիկ տարում	5,749	(12,514)
	0	0
Շահութահարկի գծով ծախս	133,357	158,197
Հետաձգված հարկային ակտիվներ	2012	2011
Հունվարի 1-ի դրությամբ – հետաձգված հարկային ակտիվներ/(պարտավորություններ)	8,939	(3,575)
Համապարփակ եկամուտում ճանաչված հետաձգված շահութահարկի մնացորդների փոփոխություններ	(5,749)	12,514
Դեկտեմբերի 31-ի դրությամբ - հետաձգված հարկային ակտիվներ	3,190	8,939

11. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	2012թ. դեկտեմբերի 31	2011թ. դեկտեմբերի 31 (Վերաներկայացված, Ծան. 4)	2010թ. դեկտեմբերի 31 (Վերաներկայացված, Ծան. 4)
Կանխիկ դրամ	7,226	3,844	1,437
Թղթակցային հաշիվներ բանկերում	90,343	119,217	134,048
Տեղաբաշխված միջոցներ բանկերում՝ մինչև երեք ամիս մարման ժամկետով	2,355,355	1,110,800	424,036
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,452,924	1,233,861	559,521

2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներառված կուտակված տոկոսները կազմում են 2,619 հազ. ՀՀ դրամ և 1,434 հազ. ՀՀ դրամ, համապատասխանաբար:

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը երկու ռեզիդենտ առևտրային բանկերում ուներ տեղաբաշխված միջոցներ մինչև երեք ամիս մարման ժամկետով 2,355,355 հազ. ՀՀ դրամ և 1,110,800 հազ. ՀՀ դրամ համապատասխանաբար:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների տոկոսադրույքի վերլուծությունը բացահայտված է Ծանոթագրություն 26-ում:

12. ՇԱՀՈՒՅԹԻ ԵՎ ՎՆԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՈՎ ՉԱՓՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ճանաչված ֆինանսական ակտիվները ներկայացված են արտարժույթի սվոպ գործարքներով կնքված 2011թ-ի դեկտեմբերին Ընկերության և ԱրմՍվիսթանկի միջև: Գործիքի պայմանագրային ժամկետը ավարտվել է 2012թ-ի հունիսին: Ստորև ներկայացված են տարվա վերջի դրությամբ ակտիվ գործարքները: Այս գործարքների գումարները ներկայացված են համախառն հիմունքներով՝ նախքան հաշվանցումը:

	2012թ. դեկտեմբերի 31		2011թ. դեկտեմբերի 31	
	Մայր գումար	Ակտիվի իրական արժեքը	Մայր գումար	Ակտիվի իրական արժեքը
Առք ԱՄՆ դոլար	-	-	617,232	3,904
Վաճառք ՀՀ դրամ	-	-	613,328	-

13. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐ

Հաճախորդներին տրված վարկերը պարունակում են՝

	2012թ-ի դեկտեմբերի 31	2011թ-ի դեկտեմբերի 31
Հաճախորդներին տրված վարկեր	17,783,941	13,693,898
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(85,094)	(84,577)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	17,698,847	13,609,321

Արժեզրկման կորուստների պահուստների շարժը 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար բացահայտված են Ծանոթագրություն 6-ում:

	2012թ. դեկտեմբերի 31	2011թ. դեկտեմբերի 31
Վերլուծություն ըստ ճյուղայնության՝		
Գյուղատնտեսություն	6,453,117	4,604,510
Առևտուր	6,308,523	4,958,932
Արդյունաբերություն	1,534,923	969,713
Տրանսպորտ	766,579	610,507
Շինարարություն	408,987	377,164
Այլ	2,311,812	2,173,072
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(85,094)	(84,577)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	17,698,847	13,609,321

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքն՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	Առևտուր	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
Վարկեր ապահովված շարժական գույքով	4,448,628	38,424	932,379	127,965	7,721	665,254	6,220,371
Վարկեր ապահովված անհատների երաշխավորությամբ	1,770,541	6,406,658	561,470	638,614	401,266	1,638,013	11,416,562
Վարկեր ապահովված անշարժ գույքով	89,354	8,035	41,074	-	-	8,545	147,008
Նվազեցված՝ արժեզրկման կորուստների պահուստը	(32,635)	(28,292)	(7,303)	(3,611)	(1,807)	(11,446)	(85,094)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	6,275,888	6,424,825	1,527,620	762,968	407,180	2,300,366	17,698,847

Ստորև բերվող աղյուսակն ամփոփում է հաճախորդներին տրված վարկերի հաշվեկշռային արժեքները՝ ըստ Ընկերության կողմից ստացված ապահովվածության տեսակի 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

	Առևտուր	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
Վարկեր ապահովված շարժական գույքով	3,290,879	26,828	509,779	64,641	19,874	891,656	4,803,657
Վարկեր ապահովված անհատների երաշխավորությամբ	1,629,313	4,577,682	459,934	545,866	350,573	1,258,125	8,821,493
Վարկեր ապահովված անշարժ գույքով	38,740	-	-	-	6,717	23,291	68,748
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(31,594)	(26,768)	(5,303)	(3,962)	(2,060)	(14,890)	(84,577)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	4,927,338	4,577,742	964,410	606,545	375,104	2,158,182	13,609,321

Վարկատեսակների կատեգորիաներից մեկը, որ Ընկերությունն առաջարկում է իր հաճախորդներին, այսպես կոչված, խմբային վարկերն են, որոնք ներառում են Խմբային Գյուղատնտեսական և Համապարտ Պատասխանատվությամբ Խմբային վարկերը: Այս վարկերը, ենթադրում են խմբի անդամների իրավաբանորեն սահմանված համապարտ պատասխանատվություն խմբի յուրաքանչյուր անդամի կողմից ստացված վարկի համար՝ անդամների անվճարունակության դեպքում:

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 71 փոխառու (2011թ-ին՝ 55 փոխառու) առավելագույն 35,000 ԱՄՆ դոլար գումարի փոխառության չափով: Այս վարկերի հանրագումարը 656,920 հազ. ՀՀ դրամ էր (2011թ-ին՝ 529,414 հազ. ՀՀ դրամ) կամ համախառն վարկային պորտֆելի 4 % (2011թ-ին՝ 4 %):

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաճախորդներին տրված բոլոր վարկերը (ամբողջ պորտֆելը՝ 100%) տրվել են այն անհատներին ու կազմակերպություններին, որոնք գործում են Հայաստանի Հանրապետությունում, որը ցույց է տալիս, որ առկա է նշանակալի աշխարհագրական համակենտրոնացում մեկ շրջանում:

2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել վերանայված վարկեր, բացառությամբ այն վարկերի, որոնք փոխառուի մահվան պատճառով փոխանցվել են այլ գործընկերոջ, որը կազմում է 12,602 հազ. ՀՀ դրամ և 4,951 հազ. ՀՀ դրամ, համապատասխանաբար:

Ստորև ներկայացված է 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ վերլուծությունը

	Առևտուր	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
Խմբային հիմունքով արժեզրկած - առանց ժամկետանց օրերի	6,259,011	6,434,650	1,521,388	763,443	407,937	2,298,033	17,684,462
- 1-ից 30 օր ժամկետանց	16,089	10,289	10,896	620	437	5,635	43,966
- 31-ից 60 օր ժամկետանց	9,525	5,414	2,500	280	174	50	17,943
- 61-ից 90 օր ժամկետանց	16,115	2,267	-	2,236	403	2,538	23,559
- 91-ից 180 օր ժամկետանց	7,783	497	139	-	36	5,556	14,011
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր (մինչև արժեզրկումը)	6,308,523	6,453,117	1,534,923	766,579	408,987	2,311,812	17,783,941
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(32,635)	(28,292)	(7,303)	(3,611)	(1,807)	(11,446)	(85,094)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	6,275,888	6,424,825	1,527,620	762,968	407,180	2,300,366	17,698,847

Ստորև ներկայացված է 2011թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային պորտֆելի որակի վերաբերյալ վերլուծությունը

	Առևտուր	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Տրանսպորտ	Շինարարություն	Այլ	Ընդամենը
Խմբային հիմունքով արժեզրկած առանց ժամկետանց օրերի	4,932,198	4,595,317	968,899	608,157	376,554	2,158,060	13,639,185
1-ից 30 օր ժամկետանց	15,251	3,402	12	409	370	6,357	25,801
31-ից 60 օր ժամկետանց	4,835	1,479	655	33	229	2,199	9,430
51-ից 90 օր ժամկետանց	1,057	689	134	270	-	3,262	5,412
91-ից 180 օր ժամկետանց	5,591	3,623	13	1,638	11	3,194	14,070
Ընդամենը հաճախորդների ն տրված վարկեր (մինչև արժեզրկում)	4,958,932	4,604,510	969,713	610,507	377,164	2,173,072	13,693,898
Նվազեցված արժեզրկման կորուստների պահուստը	(31,594)	(26,768)	(5,303)	(3,962)	(2,060)	(14,890)	(84,577)
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր	4,927,338	4,577,742	964,410	606,545	375,104	2,158,182	13,609,321

14. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Հիմնական միջոցները ներառում են՝

	Վարձակալած հիմնական միջոցների վրա կապիտալ ներդրումներ	Կապի և հաղորդակցման միջոցներ	Գրասենյակային սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2011թ. հունվարի 1	135,225	87,044	59,167	30,046	33,372	344,854
Ավելացում	31,896	31,561	31,107	-	26,798	121,362
Օտարում	(2,659)	(527)	-	-	-	(3,186)
2011թ. դեկտեմբերի 31	164,462	118,078	90,274	30,046	60,170	463,030
Ավելացում	45,031	39,944	70,179	51,143	31,564	237,861
Օտարում	(681)	-	-	-	(2,149)	(2,830)
2012թ. դեկտեմբերի 31	208,812	158,022	160,453	81,189	89,585	698,061
Կուտակված մաշվածություն						
2011թ. հունվարի 1	22,263	49,424	23,497	11,380	14,781	121,345
Մաշվածության ծախս	14,404	24,764	14,388	6,009	7,686	67,251
Օտարում	(834)	(113)	-	-	-	(947)
2011թ. դեկտեմբերի 31	35,833	74,075	37,885	17,389	22,467	187,649
Մաշվածության ծախս	18,544	28,311	21,886	12,545	13,376	94,662
Օտարում	(240)	-	-	-	(1,841)	(2,081)
2012թ. դեկտեմբերի 31	54,137	102,386	59,771	29,934	34,002	280,230
Զուտ հաշվեկշռային						
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	154,675	55,636	100,682	51,255	55,583	417,831
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	128,629	44,003	52,389	12,657	37,703	275,381

Մաշվածության և ամորտիզացիայի ծախսերը, որոնք ներկայացված են համապարփակ եկամուտների մասին հաշվետվությունում, ներառում են հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի ծախսերը:

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի ունեցել գրավադրված հիմնական միջոց:

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված, բայց դեռ օգտագործվող ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքը կազմում էր 90,189 հազ. ՀՀ դրամ և 53,721 հազ. ՀՀ դրամ, համապատասխանաբար:

15. ՈՉ ԼՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Ոչ նյութական ակտիվները ներկայացված են համակարգչային ծրագրերում կատարված ներդրումներով՝

	Համակարգչային ծրագրեր	Կապիտալ ներդրումներ համակարգչային ծրագրերում	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2011թ. հունվարի 1	14,488	49,219	63,707
Ավելացում	5,989	-	5,989
Օտարում	(1,588)	-	(1,588)
2011թ. դեկտեմբերի 31	18,889	49,219	68,108
Ավելացում	39,765	-	39,765
Օտարում	-	-	-
2012թ. դեկտեմբերի 31	58,654	49,219	107,873
Կուտակված մաշվածություն			
2011թ. հունվարի 1	3,960	-	3,960
Մաշվածության ծախս	5,632	-	5,632
Օտարումներ	-	-	-
2011թ. դեկտեմբերի 31	9,592	-	9,592
Մաշվածության ծախս	2,683	-	2,683
Օտարումներ	-	-	-
2012թ. դեկտեմբերի 31	12,275	-	12,275
Հաշվեկշռային արժեք			
2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	46,379	49,219	95,598
2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	9,297	49,219	58,516

Համակարգչային ծրագրերում կապիտալ ներդրումները իրենցից ներկայացնում են բանկային ծրագրեր ձեռք բերված 2010թ-ին Ընկերության միկրոֆինանսավորող բանկ վերակազմավորվելու կապակցությամբ: Ծրագիրը նախատեսվում է շահագործել սկսած 2014թ-ից, ըստ այդմ, կմաշեցվի սկսած շահագործման օրվանից:

16. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

Այլ ակտիվները ներառում են՝

	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ		
Կանխավճարներ	89,905	15,349
Կանխավճարներ վարձակալության գծով	87,860	19,950
Պաշարներ	25,839	12,500
Կանխավճարներ աշխատակիցներին	192	489
Այլ	100	-
Ընդամենը այլ ակտիվներ	203,896	48,288

17. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

	Արժույթ	Մարման ժամկետ	Անվանական տոկոսադրույք %	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Անվանական տոկոսադրույք %	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Վարկեր և փոխառություններ այլ կազմակերպություններից	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար	1-4 տարի	6.11%-17.78%	11,060,214	6.11%-17.78%	9,524,948
Վարկեր բանկերից և ֆինանսական կազմակերպություններից	ՀՀ դրամ	1-4 տարի	12.66%-16%	3,272,000	14.16%-14.46%	1,699,923
				14,332,214		11,224,871

Փոխառու միջոցների ներգրավումը պարտավորեցնում է նաև Ընկերությանը պարտավորագրով/պայմանագրով նախատեսված ֆինանսական սահմանափակող դրույթներ պահպանել: Այս դրույթներն իրենց մեջ ներառում են սահմանված գործակիցներ, պարտավորությունները կապիտալին հարաբերող գործակիցներ և ֆինանսական արդյունքներին վերաբերող այլ տարբեր գործակիցներ: 2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի խախտել այդ գործակիցներից ոչ մեկը:

Փոխառու միջոցների իրական արժեքի բացահայտումը ներկայացված է Ծանոթագրություն 25-ում: Փոխառու միջոցների տոկոսադրույքի վերլուծությունը ներկայացված է Ծանոթագրություն 27-ում: Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 23-ում:

18. ԱՅԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այլ պարտավորությունները ներառում են՝

	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ֆինանսական պարտավորություններ՝		
Պարտավորություններ անձնակազմի նկատմամբ	159,068	135,303
Պարտավորություններ մատուցած ծառայությունների գծով	40,969	25,714
	<hr/>	<hr/>
	200,037	161,017
Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ		
Պարտավորություններ հարկերի գծով բացառությամբ շահութահարկի	97,738	61,487
		455
Այլ	-	
	<hr/>	<hr/>
Ընդամենը այլ պարտավորություններ	297,775	222,959
	<hr/> <hr/>	<hr/> <hr/>

19. ՄՏՈՐԱԴԱՍ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆ

2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ստորադաս փոխառությունը ներառել է հետևյալը՝

2009թ-ին Ընկերությունը Finca Microfinance Fund B.V.-ից ստացել է 2,500,000 ԱՄՆ դոլարի ստորադաս փոխառություն: Ֆոնդի սեփականատերն է Հոլանդական Հիմնադրամը՝ Stichting holding Microfinance Fund անվանմամբ, որի հիմնադիրն է Deutsche Bank-ը: Վարկը տրամադրված է 7 տարի ժամկետով, տարեկան 12.63% տոկոսադրույքով: 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ նշված ստորադաս փոխառության գումարը կազմել է 1,022,545 հազ. ՀՀ դրամ (2011թ.-ին՝ 976,714 հազ. ՀՀ դրամ), որտեղ ներառված հաշվեգրված տոկոսները կազմել են 19,822 հազ. ՀՀ դրամ (2011թ.-ին՝ 12,289 հազ. ՀՀ դրամ): Ընկերության սնանկացման կամ լուծարման դեպքում այս պարտքի վճարումը ստորադաս է մյուս բոլոր պարտատերերին՝ Ընկերության պարտավորությունների վճարմանը:

Ընկերությունը պարտավոր է պահպանել վերոնշյալ ստորադաս փոխառության պայմանագրի սահմանափակող դրույթները: Այս պարտավորագիրը ներառում է սահմանված գործակիցներ, պարտավորությունները կապիտալին հարաբերող գործակիցներ և ֆինանսական արդյունքների վերաբերող այլ գործակիցներ: Ընկերությունը այս սահմանափակող դրույթներից ոչ մեկը չի խախտել 2012 և 2011թթ. հաշվետու տարիների ընթացքում:

Ստորադաս փոխառության իրական արժեքի բացահայտումը ներկայացված է Ծանոթագրություն 24-ում:

20. ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ հայտարարված և թողարկված բաժնետիրական կապիտալը բաղկացած էր 449,171 և 136,472 սովորական բաժնետոմսերից: Բոլոր սովորական բաժնետոմսերն ունեն 10,000 ՀՀ դրամ անվանական արժեք և ունեն մեկ ձայնի իրավունք:

2012թ-ի հունիսին Բաժնետերերի Ընդհանուր ժողովի ժամանակ որոշում է կայացվել ավելացնել կանոնադրական կապիտալը՝ 3,126,990,000 ՀՀ դրամ (7,563,657 ԱՄՆ դոլարին համարժեք) արժողությամբ 312,699 հատ լրացուցիչ բաժնետոմս թողարկելով, որից 850,000,000 ՀՀ դրամ արժեքով (2,063,657 ԱՄՆ

դրար) չբաշխված շահույթից, իսկ 2,276,990,000 ՀՀ դրամ (5,500,000 ԱՄՆ դոլար) բաժնետերերի կատարած դրամական ներդրումներից:

2012 և 2011թթ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չի տիրապետում որևէ սեփական բաժնետոմսի:

Ընկերության բաժնետիրական կապիտալը ներդրվել է ՀՀ դրամով բաժնետերերի կողմից, վերջիններս դիվիդենդ և կապիտալի այլ բաշխումներ են ստանում ՀՀ դրամով:

2012թ-ին Ընկերությունը հայտարարեց 2011թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 329,502 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով դիվիդենդ: 2011թ-ին Ընկերությունը հայտարարեց 2010թ-ի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար 207,520 հազ. ՀՀ դրամ ընդհանուր գումարով դիվիդենդ:

Բաժնետերերին բաշխման ենթակա պահուստները հավասար են ՀՀ օրենսդրությամբ սահմանված չբաշխված շահույթի գումարին: Չբաշխվող պահուստները ներկայացվում են պահուստավորման ֆոնդով, որը ստեղծվում է օրենսդրության պահանջով՝ ի նկատի ունենալով ապագա ռիսկերը՝ ներառյալ կորուստները, այլ անկանխատեսելի ռիսկերը և պատահականությունները: Պահուստները ստեղծվում են Ընկերության կանոնադրության համաձայն, ըստ որի պահուստի ստեղծման համար սահմանված է կազմակերպության բաժնետիրական կապիտալի 15%-ը՝ արտահայտված կազմակերպության ՀՀ օրենսդրության համապատասխան պատրաստված հաշվետվություններում:

21. ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒԹ

Համաձայն ՀՀ օրենսդրության՝ միայն կազմակերպության օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտահայտված կուտակային չբաշխված շահույթը կարող է բաշխվել կազմակերպության բաժնետերերին որպես դիվիդենդ: 2012թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության չբաշխված շահույթը կազմել է 733,656 հազ. ՀՀ դրամ (2011թ-ին՝ 1,367,250 հազ. ՀՀ դրամ):

Ընկերության հաշվետվություններում արտացոլված հնարավոր կորուստների ծածկման նպատակով ստեղծված չբաշխված շահույթը ներառում է 98,503 հազ. ՀՀ դրամի չափով (2011թ-ին՝ 67,201 հազ. ՀՀ դրամ) պահուստային ֆոնդ: Համաձայն ՀՀ օրենսդրության Ընկերությունը պետք է պահուստային ֆոնդ ստեղծի իր անցած տարիների շահույթից կամ ընթացիկ ծախսերից: Պահուստի այս գումարը չպետք է բաշխվի Ընկերության բաժնետերերի միջև և միայն պետք է օգտագործվի Ընկերության լուծարման դեպքում:

22. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունը կնքում է հետհաշվեկշռային ռիսկեր ունեցող ֆինանսական գործիքներ, որպեսզի բավարարի հաճախորդների կարիքները: Այս ռիսկերը, որոնք ներառում են վարկային ռիսկի տարրեր աստիճաններ, չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունն հետհաշվեկշռային պարտավորությունները ստանձնելիս օգտագործում է նույն վարկային վերահսկողության ու կառավարման քաղաքականությունը, ինչն օգտագործում է հաշվեկշռային գործառնությունների ժամանակ:

2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը պայմանական պարտավորությունների կորուստների համար պահուստներ չունի:

Կապիտալի պարտավորություններ – 2012 և 2011թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի կապիտալի պարտավորություններ:

Պարտավորություններ գործառնական վարձակալության գծով – Ընկերությունը վարձակալում է մի շարք գրասենյակային տարածքներ գործառնական վարձակալությամբ: Սովորաբար վարձակալության

Ժամկետը տևում է 3-5 տարի, հետագայում վերակնքելու հնարավորությամբ: Վարձակալության վճարները յուրաքանչյուր 2-3 տարին մեկ ավելանում են՝ շուկայական վարձավճարներն արտացոլելու համար: Որոշակի վարձակալություններ տրվում են հավելյալ վարձավճարով, որը հիմնված է տեղական գնային ինդեքսի փոփոխությունների վրա:

Երբ Ընկերությունը հանդիսանում է վարձակալ չդադարեցվող գործառնական վարձակալությամբ վերցված գրասենյակների ապագա նվազագույն վարձավճարների կառուցվածքը հետևյալն է՝

	2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2011թ. Դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1տարի	266,284	143,253
1-5 տարի	931,682	352,610
5 տարուց ավել	221,345	999,176
Ընդամենը պարտավորություններ գործառնական վարձակալության գծով	1,419,311	1,495,039

